ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2026/158

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2026 թ. N 158

«ՇՈՒՇիի ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Արմենակ Արմենակյան 125**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2026 թվականի մայիսի 29-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի** (այսուհետ՝ Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 19 մարտի 2025 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 10 հուլիսի 2025 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 13-15 հոկտեմբերի 2025 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 20 փետրվարի 2026 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 02 մարտի 2026 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Հերմինե Գրիգորյան** - Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Օլեգ Գևորդյան** - Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԱՊՀ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Սուսաննա Օրդոյան** - Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Գարեգին Դավթյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջում իրականացվում են հինգ միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ հաշվապահական հաշվառման, գյուղացիական տնտեսության կազմակերպման, տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգերի, քաղաքաշինական կադաստրի և դիզայնի ուղղություններով: Կրթական ծրագրերը հիմնականում ունեն կիրառական ուղղվածություն և որոշ դեպքերում կապվում են գործընկեր կազմակերպությունների, գործնական պարապմունքների, պրակտիկայի հնարավորությունների և առկա ռեսուրսների հետ: Միևնույն

ժամանակ Հանձնաժողովը արձանագրում է, որ **որակավորումների արժանահավատ շնորհման** տեսանկյունից դեռևս հստակեցման կարիք ունեն կրթական ծրագրերի բովանդակության, ուսումնառության վերջնարդյունքների և ՄԿՈՒ մակարդակին համապատասխանության հարցերը: Առանձին մոդուլների ուսումնառության նյութերն ու գնահատման թերթիկները դեռևս մշակման փուլում են, իսկ որոշ ծրագրերում դասավանդման բովանդակությունն ու մեթոդական մոտեցումները ամբողջությամբ հարմարեցված չեն միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին: Հանձնաժողովը կարևորում է, որ քոլեջը կրթական ծրագրերի վերջնարդյունքները ձևակերպի առավել գնահատելի ձևով՝ ապահովելով դրանց կապը դասավանդման մեթոդների, պրակտիկայի, նախագծային աշխատանքների, գործատուների պահանջների հետ: ՄԿԾ-ների մշտադիտարկումն ու վերանայումը պետք է իրականացվեն համակարգված՝ ներգրավելով ուսանողներին, դասախոսներին, գործատուներին և գործընկեր կազմակերպություններին, որպեսզի շնորհվող որակավորումները հիմնավորվեն ոչ միայն ծրագրերի առկայությամբ, այլև ուսանողների ձեռք բերած փաստարկված կարողություններով:

II. Քոլեջը գործում է հետպատերազմյան, տեղահանության և վերակազմավորման պայմաններում՝ ապահովելով կրթական գործընթացի շարունակականությունը: Հանձնաժողովը դրական է գնահատում, որ հաստատությունը նոր միջավայրում ձևակերպել է աշխատաշուկային միտված առաքելություն, պահպանել է կրթական գործունեությունը և ձեռնարկել է ռեսուրսների ներգրավման քայլեր: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը արձանագրում է, որ **արդյունքահեն կառավարման** համակարգը դեռևս ամբողջությամբ համապատասխանեցված չէ քոլեջի ներկայիս կարգավիճակին և միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին: Կառավարման մեջ պահպանվել են նախկին բուհական մոդելի տարրեր, իսկ ռազմավարական և գործառնական պլանավորումը դեռևս ամբողջությամբ չի կապվում ռեսուրսների, ՄԿԾ-ների արդյունավետության և որակի ապահովման գործընթացների հետ:

Հանձնաժողովը կարևորում է, որ քոլեջը հստակեցնի կառավարման մարմինների գործառույթները, պատասխանատվությունները և որոշումների կայացման մեխանիզմները: Առանձնահատուկ կարևոր է Հոգաբարձուների խորհրդի կազմի և դերակատարության վերանայումը՝ արտաքին շահակիցների ներգրավմամբ: Խորհրդում անհրաժեշտ է ներգրավել գործատուների, բարերարների, սփյուռքի ներկայացուցիչների, ոլորտային մասնագետների և հանրային կապեր ունեցող անձանց, որոնք կարող են նպաստել քոլեջի ռազմավարական զարգացմանը, ռեսուրսների ներգրավմանը, հասարակական վստահության ձևավորմանը և աշխատաշուկայի հետ կապի ամրապնդմանը: Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ որակի ապահովման և հասարակական պատասխանատվության համակարգերը դեռևս լիարժեք չեն ծառայում կառավարման որոշումների կայացմանը: Քոլեջին անհրաժեշտ է ՈԱ գործընթացները դարձնել կառավարման մաս՝ ապահովելով պարբերական տվյալահավաք, վերլուծություն, հանրային հաշվետվողականություն և բարելավման գործողությունների պլանավորում:

III. Քոլեջին անհրաժեշտ է հավատարմագրման պայմանների կատարման շրջանակում.

- մշակել և հաստատել անցումային զարգացման գործողությունների պլան՝ հստակ ժամկետներով, պատասխանատուներով, ակնկալվող արդյունքներով և չափելի ցուցիչներով՝ հաշվի առնելով քոլեջի նոր միջավայրը, ռեսուրսային սահմանափակումները և միջին մասնագիտական կրթության պահանջները,
- վերանայել Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ ներգրավելով արտաքին շահակիցների,

- հստակեցնել ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքները և գնահատման գործիքները՝ ապահովելով, որ դրանք լինեն չափելի, գործնականում գնահատելի և համապատասխան միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին,
- վերանայել դասավանդման բովանդակությունն ու մեթոդական մոտեցումները՝ դրանք մոտեցնելով ՄԿՈՒ մակարդակին,
- ապահովել գործատուների և գործընկեր կազմակերպությունների համակարգված մասնակցությունը ՄԿԾ-ների վերանայման, պրակտիկայի կազմակերպման, նախագծային առաջադրանքների մշակման և վերջնարդյունքների գնահատման գործընթացներում,
- ձևավորել որակի ներքին ապահովման ամբողջական համակարգ՝ հստակ պատասխանատուներով, տարեկան պլանով, տվյալահավաքի և վերլուծության մեխանիզմներով, բարելավման գործողությունների պլաններով և դրանց կատարման մշտադիտարկմամբ,
- ՈԱ գործընթացները կապել կառավարման որոշումների հետ՝ ապահովելով, որ ուսանողների, դասախոսների, գործատուների և շրջանավարտների հետադարձ կապը վերլուծվի և օգտագործվի կրթական ծրագրերի, ռեսուրսների, դասավանդման և գնահատման բարելավման համար,
- մշակել հասարակական պատասխանատվության և հանրային հաղորդակցության գործողությունների պլան՝ ապահովելով քոլեջի առաքելության, կրթական ծրագրերի, ընդունելության, ուսանողական աջակցության, գործընկերությունների, ռեսուրսների և արդյունքների պարբերական ու թափանցիկ հրապարակումը,
- զարգացնել շրջանավարտների հետագծման և զբաղվածության տվյալների հավաքագրման համակարգը՝ արդյունքները օգտագործելով ՄԿԾ-ների արդիականացման, կարիերային աջակցության և գործատուների հետ կապի ամրապնդման համար,
- մշակել ռեսուրսների զարգացման և օգտագործման պլան՝ առաջնահերթություն տալով համակարգչային տեխնիկայի, գրադարանային ֆոնդի, լաբորատոր միջավայրերի և ուսումնական ռեսուրսների արդիականացմանը՝ ըստ կրթական ծրագրերի իրականացման կարիքների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:

4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**
29 մայիսի 2026 թ.